Ի.Վ.ԴՈԼԺԵՆԿՈ
ՀԱԻ

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԲՈԳԴԱՆՈՎԿԱՑԻ ՇՐՋԱՆԻ ԴՈՒԽՈԲՈՐՆԵՐԸ

/Ըստ հեղինակի հավաքած դաշտային նյութերի/

1. Հոգևոր քրիստոնեության աղանդներից մեկի ներկայացուցիչները՝ դուխոբորները կամ դուխոբորցիներն Անդրկովկաս են տեղափոխվել Ռուսաստանի Տավրիկյան նահանգից: 1841թ. Ախալքալաքի գավառում նրանք հիմնել են ութ գյուղ, որոնց բնակչությունը 19-րդ դ. վերջերին կազմել է ավելի քան 6000 մարդ:

2. Վերաբնակվելով բնական պայմաններով անսովոր աշխարհագրական գոտում, ռուս գյուղացիները պահպանեցին տնտեսության վարման գլխավոր ճյուղերի՝ երկրագործության ու անասնապահության, ինչպես նաև զգալի տեսակարար կշիռ ունեցող արհեստների ու տնայնագործության ավանդութային եղանակները: Դուխոբորները հիմնական ուշադրություն էին նվիրում անասնապահությանը՝ տնտեսության այդ ասպարեզում հասնելով նշանակալի արդյունքների: Դուխոբորների նյութական մշակույթն աչքի է ընկնում յուրատիպությամբ: Բնակլիմայական պայմանների բերումով օգտագործում էին տեղական շինանյութերը, պահպանելով բնակարանի արտաքին տեսքի և հատակագծման, ներսույթի ու հագուստի էթնիկ առանձնահատկությունները: Ժոխ զարդանախշված ժողովրդական տարազը ցայտուն էթնոցուցանիշ էր, նրանց էթնիկ և տեղական պատկանելության խորհրդանիշ: Գլխի հարդարանքն ուներ խորքային իմաստ, կապված դուխոբորական շարժման պատմության հետ:

Զարգացած ընտանեկան և տոնացուցային ծիսակարգն աչքի էր ընկնում կայունությամբ և պահպանվել է մինչև օրս:

3. Հետաքրքիր է դուխոբորների կրոնական կյանքը: Մերժելով պետական իշխանությունը, դուխոբորները ընդունում են իրենց ղեկավարների հոգևոր և աշխարհիկ իշխանությունը: ,,Սուրբ'' պատգամների և կանխագուշակումների աղբյուր նրանց համար հանդիսանում էր ոչ թե Աստվածաշունչը, այլ դուխոբոր առաջնորդների ,,խոսքը'', հենց իրենց՝ դուխոբորների կազմած սաղմոսներն ու սուրբ գրությունները, որոնք հավաքված են այսպես կոչված ,,կենդանության գրքում'': Նրանք մերժում էին արտաքուստ աստվածապաշտությունն ու դեմ էին սրբապատկերներին և եկեղե-

ՀԱՅ ԳԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ցական տամարներին: Սաղմոսների անգիր արտասանումը հերթով, յուրահատուկ խմբերգությունը, ինչպես և համբուրվելու ծեսը կազմում են դուխոբորների ,,պաշտամունքի'' արտաքին գծերը: 1890-ական թթ. զինվորական ծառայությունից հրաժարվելը հարուցեց ցարական կառավարության դաժան հաշվեհարդարը դուխոբորների հետ, որը դրդեց նրանց մի մասին արտագաղթելու կանաչ:

4.Դուխոբորների տնտեսական և մշակութային ավանդույթներն ամբողջական ու կայուն համակարգ են: Ավանդույթների երկար պահպանման պատճառներից են եղել՝ վերաբնակների այլէթնիկ միջավայրը, կրոնադավանական մեկուսիությունը, այդ շրջանի ծայրամասային լինելը, ինչպես և, անկասկած, դուխոբորների հասարակական կյանքի իրադարձությունները, որոնք 19-րդ դ. վերջին հանգեցրին էթնո-դավանական ինքնագիտակցության վերելքի:

Բ.Ե.ՋԱՔԱՐՅԱՆ
ՀԱԻ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ներկայացվում են հայոց ազգակցության համակարգի հիմնական գծերը՝ ըստ զրաբարյան, արդի զրական հայերենի և բարբառային տերմինաբանության բաղադրամասային վերլուծության:

Այստեղ բերվում է միայն բարբառային տերմինաբանության բաղադրամասային վերլուծության պատկերը, որը կառուցվածքային առումով քիչ է տարբերվում մնացած երկու տերմինաբանությունից:

Ա. Արենակցական տերմինաբանության բաղադրամասային վերլուծություն՝ ընդունված են հետևյալ գործոնները.

1. A - *Alter*-ի սեռը: A_I -տղամարդ, A_2 -կին:

2. Б- Ազգակցական կապի բնույթը: $Б_I$ - արենակցական ազգակցություն: Խնամիության հետ կապի բացակայությունը: $Б_2$ - խնամիության հետ կապի առկայությունը:

3. B - *Alter*-ի սերնդային պատկանելությունը: $B_I = +2, B_2 = +1, B_3 = 0, B_4 = -1, B_5 = -2, B_6 = -3, B_7 = -4, B_8 = -5$:

4. Г -Գծայնություն: $Г_I$ -ուղիղ գիծ, $Г_2$ -շեղ գիծ, $Г_3$ -ոչ գծա-